ԱՐՑԱԽՅԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՋԱՐԿԵՐԱԿԸ

Շահումյանի շրջանից դուրս են բերվել ՆԳՆ զորքերը. փոխարենը շրջանի տարածք են մտցվել կարմիր բերետավորներ: Շատ գյուղերի տարածքներում դեսանտներ են իջեցվել եւ անց են կացվում անձնագրային ռեժիմի ստուգումներ: Փաստորեն այստեղ կանգնեցված են բոլոր տեսակի աշխատանքները. գյուղացիները հնարավորություն չունեն նույնիսկ իրենց տնամերձերում աշխատելու:

Ստեփանակերտ. Պոլյանիչկոյի կոմիտեի ճնշմամբ եւ վինվորականների աջակցությամբ աշխատանքներ են տարվում մարզը ադրբեջանահպատակ դարձնելու համար անց են կացվում ժողովներ, հավաքներ, ամեն կերպ ցանկանում են ժողովրդին պարտադրել կոմկոմիտեի եւ Ադրբեջանի ղեկավար շրջանների ցանկությունները:

Փաստորեն ոչ մի աշխատանք չի ձեռնարկվում մարզի տարածքից բռնի կերպով տեղահանված բնակիչների վերադարձի համար:

Մայիսի 30-ին Երեւանից Ստեփանակերտ թռչող միակ ինքնաթիռով, Ստեփանակերտ էին մեկնել Լենինգրադի քաղխորհրդի պատգամավորներ եւ 2 լրագրողներ՝ Տատյանա Լիխանովան եւ Ալեքսանդր Գորշկովը:

Ստեփանակերտի օդակայանում նրանց դիմավորել է ՕՄՈՆ-ը եւ տարել անհայտ ուղղությամբ:

Նրանք Լենինգրադի քաղխորհրդի որոշմամբ մեկնել էին Երեւան-Ստեփանակերտ-Բաքու, որպես պաշտոնական պատգամավորություն, ուսումնասիրելու Արցախում ստեղծված իրադրությունը:

Ասկերանի շրջ. Սարդարաշեն գյուղից մայիսի 30-ի լույս 31-ի գիշերը գողացել են 57 գլուխ խոշոր եղջրավոր անասուն, վիրավորված են 2 անասնապահ, որոնցից մեկը ծանր է եւ գտնվում է հիվանդանոցում:

Շուշիից եւ Կրկժանից ամբողջ գիշեր կրակել են Շոշ գյուղի վրա:

Շահումյանի շրջանում մայիսի 31-ին, առավոտյան ժամը 7-ի դրությամբ դրությունը հանգիստ է:

Մեր սեփ. թղթ.